ԳՏՀ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«20» 08 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 208 - 25

Նախաձեռնող՝ ***«ՍԻՄՈՆՅԱՆ» կրթական հիմնադրամ***
Ք. Երևան, Հալաբյան 16/2

Գործունեությունը՝ ***Հալաբյան փողոցի 16/2 հասցեում ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցում***
Ք. Երևան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 208 - 25

«20» օգոստոսի 2025 թ.

Երևանի Հալաբյան փողոցի 16/2 հասցեում ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՀ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք. Երևան

Ներածական մաս. «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից նախատեսվում է կառուցել ինժեներական և կիրառական գիտությունների համալիր (այսուհետ՝ համալիր) Երևանի Հալաբյան փողոցի 16/2 հասցեում՝ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի արևելյան մասում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Համալիրի կառուցման նախագիծը կազմվել է 2022 թվականի օգոստոսի 8-ին Երևանի քաղաքապետարանի կողմից տրված N 01/18-07/2-50/22514-711 նախագծման թույլտվությանը համապատասխան:

Նկարագրական մաս. Հողատարածքը արևմուտքից սահմանափակված է Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի շենքով ու բացօթյա ավտոկանգառով, իսկ հյուսիսից, արևելքից ու հարավից՝ Հրազդան գետի ձորով: Հողամասը գտնվում է բլուրի գագաթնամասում և ունի սակավ թեքություններ դեպի Հրազդանի ձորը ու Թումո կենտրոնի այգին: Համալիրի հետիոտն մուտքերը նախագծված են Թումո կենտրոնի շենքի կողմից ու Հալաբյան փողոցից: Մեքենաների մուտքը նախատեսվում է իրականացնել հողատարածքի հյուսիս-արևմտյան հատվածից՝ Հալաբյան փողոցից: Համալիրի հիմնական զուգահեռանիստաձև ծավալը ձգված է հյուսիսից դեպի հարավ: Գլխավոր մուտքը կազմակերպված է կենտրոնական մասից՝ Թումո կենտրոնի հիմնական տարածքը նախագծվող շենքի առաջին հարկին միացնող կամրջով:

Հողատարածքի հարևանությամբ գտնվում են ազատ տարածքներ, հասարակական և բնակելի շինություններ: Հրազդան գետը գտնվում է 119 մ հեռավորության վրա: Հողամասում առկա է 188 մ^2 պահեստային տարածք, որը նախատեսվում է ապամոնտաժել: Համաձայն հաշվետվության՝ տարածքում ծառաթփային բուսականությունը և հողի բերրի շերտը բացակայում են:

Նախատեսվող գործունեության հողամասի մակերեսը կազմում է 15000 մ^2, կառուցապատման մակերեսը՝ 3220 մ^2 (21,47%), կանաչապատման մակերեսը՝ 8978 մ^2, ճանապարհներ և սալվածքներ՝ 3502 մ^2 (23.34%):

Համալիրն իրենից ներկայացնում է ուղղանկյուն զուգահեռանիստ, որի բարձրությունը վերգենտյա առաջին հարկի ճակատի երեսպատման ստորին նիշից մինչև ամենաբարձր նիշը 25,03 մ է: Համաձայն նախագծի՝ համալիրն ունենալու է մեկ ստորգետնյա, հինգ վերգետնյա և վեցերորդ տեխնիկական հարկ տանիքում: Նախատեսվել է ավտոկայանատեղի 14 ավտոմեքենայի համար, սպասարկման և տեխնիկական սենքեր՝ այդ թվում օդափոխության խցեր, պոմպակայան, ջրի ռեզերվուարներ, հիմնական էլեկտրավահանակային սենյակ, թափոնի պահեստավորման սենյակ, ծառայողական սենյակներ, սանհանգույցներ և ցնցուղարաններ, անվտանգության սենյակ, պահեստներ և այլ օժանդակ տարածքներ: Նկուղում նախատեսված է նաև գրասենյակային տարածք, որը կապված է առաջին հարկի հետ աստիճանավանդակով: Համալիրի տանիքը նախատեսված է հարթ, ներքին ջրահեռացումով: Տանիքի վրա՝ 6-րդ տեխնիկական հարկում նախատեսվել է բնական գազով աշխատող կաթսայատուն, 2 էլեկտրական սենյակ և 2 ելք աստիճանավանդակներից:

Համալիրում նախատեսված են ավտոմատ հրդեհամարման, ծխահեռացման ու օդի դիմիարի համակարգեր, հրշեջ պահարաններ՝ ծորակներով ու կրակմարիչներով ըստ հաշվարկի, վթարային լուսավորություն, հրդեհի ազդարարման համակարգ: Շենքի հարևանությամբ՝ Հալաբյան փողոցի վրա առկա է հրշեջ հիդրանտ:

Համալիրն ունի հրշեջ մեքենաների մուտեցման հնարավորություն Հալաբյան փողոցից՝ հողամասի հյուսիս-արևմտյան հատվածից և Թումո կենտրոնի շենքի կողմից: Շենքի շուրջը նախատեսված է օղակաձև ճանապարհ:

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսվել են մի շարք միջոցառումներ՝ արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում, բարձր թերմիկ դիմադրությամբ և արևաթափանցելության փոքր տոկոս ունեցող պատուհաններ, օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով, բարձր արդյունավետությամբ ջերմամեկուսիչներ, օդորակման բարձր արդյունավետության համակարգի կիրառում, օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում և այլն:

Համալիրի ջրամատակարարումն իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, իսկ ջրահեռացումը դեպի քաղաքային կոյուղու կոլեկտոր:

Համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Համալիրի գազամատակարումն իրականացվելու է ԳԲԿ Երևան-4 մնող Dw-500 կողմնատար-գազատարից՝ համաձայն տեխնիկական պայմանի:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
05431163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Շինարարության ընթացքում իրականացվող աշխատանքների արդյունքում օդային ավազանի և ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու և կանխարգելելու նպատակով կառուցապատողի կողմից իրականացվելու են անհրաժեշտ միջոցառումներ: Այդ նպատակով կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատվելու է, շինությունները, շինանյութերի և սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով, շինաշխատանքների ժամանակ իրականացվելու է ջրցան, շինարարական տեխնիկան և փոխադրամիջոցները պահվելու են սարքին վիճակում, սորուն նյութերի տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով, բեռնատարների անվադողերը լվացվելու են շինհրապարակից դուրս գալուց առաջ, հողման աշխատանքներ կատարելիս օգտագործվելու են փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնը մատակարարվելու է մասնագիտացված բետոնատար ավտոմեքենաներով պատրաստի վիճակում՝ մոտակա բետոնաշաղախային հանգույցներից:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի, ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Անհրաժեշտ ջրաքանակը ապահովվելու է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ տարածքում առկա ջրագծից: Անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում տեղադրվելու են ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո ապամոնտաժվելու են:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով բացառվելու է շինանյութերի տեղադրումը հողային ծածկույթի վրա (կտեղադրվի բետոնապատ մակերեսի վրա), ապահովվելու է շինտեխնիկայի և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ: Շինարարական տեխնիկայի վառելիքի լիցքավորումն ու յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում: Շինարարական թափոններ և շինանյութ տեղափոխող մեքենաների համար սահմանվելու է ժամանակացույց, ընտրվելու են հատուկ երթուղիներ, սահմանափակվելու է բեռնատարների բեռնվածությունը և դրանք շահագործվելու են հերթականությամբ: Աշխատանքների ավարտին տարածքը մաքրվելու է շինարարական աղբից և իրականացվելու են բարեկարգման աշխատանքներ:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնները (շինարարական աղբ, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ և գրունտի մնացորդ) պարբերաբար տեղափոխվելու են Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված վայր:

Շինարարության ընթացքում առաջացող աղմուկի ազդեցությունը նվազեցնելու նպատակով շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին, շահագործվելու են աղմուկի ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցներ, կիրառվելու են խլացուցիչներ և այլն: Հաշվետվությունում ներկայացված է աղմուկի և թրթռումների մակարդակի հաշվարկ, որի համաձայն աղմուկի մակարդակը չի գերազանցելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու նպատակով նախատեսված են կանխարգելիչ, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումներ:

Համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն(մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ.

1. մթնոլորտային արտանետումների (փոշի, ծխագազեր) քանակական և որակական չափումներ՝ ամենօրյա ռեժիմով,
2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում թնդանոթ սարքավորումով տարվա շոգ և չոր՝ դրական ջերմաստիճանով օրերին՝ 2-3 անգամ,
3. շահագործվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,
4. հողի որակի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
5. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 875000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ազդակիր համայնքում՝ Աջափնյակ վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել է հանրային լսում, որի ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Կառուցապատման իրականացման շինարարության և շահագործման փուլերում բացվելու են աշխատատեղեր: Նախաձեռնողը պարտավորվել է շինարարության ընթացքում պատշաճ ձևով իրականացնել շրջակա միջավայրի վրա առաջացող ազդեցությունները բացառող կամ նվազագույնի հասցնող միջոցառումներ, իսկ շինարարության ավարտից հետո իրականացնել տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումներն իրականացվելու են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների պարտադիր կատարմամբ:

Ջրօգտագործումն ու ջրահեռացումն իրականացվելու են պայմանագրային հիմունքներով:

Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ օրենքով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններից, Երևանի քաղաքապետարանից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել ընկերության կողմից հաշվետվությունը լրամշակելիս:

Բնապահպանական ազդեցությունները հիմնականում կանխատեսվում են շինարարության փուլում: Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 163 ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE ASSESSMENT OF THE REPUBLIC OF ARMENIA ENVIRONMENT MINISTRY OF THE REPUBLIC OF ARMENIA ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE ASSESSMENT ЗАКЛЮЧЕНИЕ COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

Կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը՝

1. շինարարության փուլում բացառել կեղտաջրերի արտահոսքը դեպի շրջակա միջավայր,
2. շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով, օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով ապահովել լրացուցիչ միջոցառումների իրականացում,
3. շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի կանաչապատում և բարեկարգում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ դրանց հետագա պարտադիր ոռոգմամբ: Կանաչապատումն իրականացնելիս առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներով,
4. ապահովել Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշմամբ սահմանված բնապահպանական պահանջների կատարումը,
5. ապահովել հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկումների ծրագրում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սիմոնյան» ԿՀ-ի կողմից Երևանի Հալաբյան փողոցի 16/2 հասցեում ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող — Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ — Գոհար Մինասյան